# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 63-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանիներ.

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | | |
| Վարսիկ Ասրյան | | | |
| Անուշ Բաղդասարյան | | | |
| Արմեն Գրիգորյան Փ. | | | |
| Ատոմ Գագինյան | | | |
| Արմեն Դավթյան | | | |
| Ջոն Կիրակոսյան | | | |
| Հմայակ Մարտիրոսյան | | | |
| Մարտուն Մարտիրոսյան | | | |
| Սյուզաննա Նազարյան | | | |
| Աղունիկ Նալբանդյան | | | |
| Լևոն Պապյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

26.08.2026թ.

հ. Ստեփանավան

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Գ. ՇԱՀԲԱԶՅԱՆ**

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԵՎ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՊԱՏՎՈ ՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Գ. ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆ**

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

5. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 111/31 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-007-0006-0036 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.002 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 06-007-0007-0076 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

Հավելված
Ստեփանավան համայնքի ավագանու
« 26» օգոստոսի 2026թ. թիվ 64-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի եկամուտներում կատարել հետևյալ փոփոխությունները

1.«Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիա» եկամտատեսակը ավելացնել 60.8 հազ. դրամով և սահմանել 202,4 հազ. դրամ:

2.«Օրենքով և իրավական ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ» եկամտատեսակը ավելացնել 2026,1 հազ.դրամով, սահմանել 22495,0 հազ.դրամ

3.«Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից)» եկամունտները սահմանել 6538,0 հազ.դրամ:

Հայաստանի հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի ծախսերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 1 դաս 1)

. հոդված «4212 – էներգետիկ ծառայություններ» ծախսային հոդվածը ավելացնել 400.0 հազ.դրամով, սահմանել՝ I եռամսյակ 3600.0 հազ. դրամ, II եռամսյակ 4800.0 հազ.դրամ, III եռամսյակ 5500.0 հազ. դրամ, ընդամենը՝ 7260,0 հազ. դրամ:

. հոդված «4213 –Կոմունալ ծառայություններ» ծախսային հոդվածը ավելացնել 500.0 հազ. դրամով, սահմանել I եռամսյակ 256.25 հազ.դրամ, II եռամսյակ 512.5 հազ. դրամ, III եռամսյակ 1400.0 հազ.դրամ, ընդամենը՝ 1525.0 հազ. դրամ

2. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 6 դաս 1)

. հոդված «4252 – մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» ծախսային հոդվածը պակասեցնել 650.0 հազ.դրամ և սահմանել 0 դրամ:

3. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Գյուղատնտեսություն» ծրագրի նախահաշվի (բաժին 04 խումբ 02 դաս 1)

. հոդված «4241 – Մասնագիտական ծառայություններ » ծախսային հոդվածը

ավելացնել 1750.0 հազ.դրամով, սահմանել II

եռամսյակ 330.0 հազ.դրամ, III եռամսյակ 2410.0 հազ. դրամ, IV եռամսյակ 2750.0 հազ. դրամ, ընդամենը՝ 2750.0 հազ. դրամ:

. հոդված «4729 – Այլ նպաստներ բյուջեից» ծախսային հոդվածը . ավելացնել 336,9 հազ.դրամով, սահմանել II եռամսյակ 4718,9 հազ.դրամ, III եռամսյակից 7805,8 հազ. դրամ, ընդամենը՝ 7805,8 հազ. դրամ:

4. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Աղբահանում» ծրագրի նախահաշվի (բաժին 05 խումբ 1 դաս 1)

. հոդված «5511 – Համաֆինանսավորմամբ *իրականացվող ծրագրեր եւ /կամ/կապիտալ ակտիվի ձեռք բերում* » ծախսային հոդվածը ավելացնել 6538,0 հազ.դրամով և սահմանել III եռամսյակից 6538,0 հազ.դրամ, ընդամենը 6538.0 հազ.դրամ:

5. Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Փողոցների լուսավորում» ծրագրի նախահաշվի (բաժին 6 խումբ 4 դաս 1)

. հոդված «5112 – շենքերի և շինությունների շինարարություն» ծախսային հոդվածը ավելացնել 40.0 հազ.դրամով, սահմանել՝ I և II եռամսյակ 10800.0 հազ.դրամ, III եռամսյակից 34440.0 հազ. դրամ, ընդամենը՝ 34440.0 հազ. դրամ:

6. . Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Հեռուստառադիոհաղորդումներ» ծրագրի նախահաշվի (բաժին 08 խումբ 03 դաս 1)

. հոդված «4234 – Տեղեկատվական ծառայություններ » ծախսային հոդվածը

պակասեցնել 250,0 հազ.դրամով, սահմանել I եռամսյակ 400.0 հազ.դրամ, II եռամսյակ 800.0 հազ.դրամ, III եռամսյակ 1200.0 հազ. դրամ, IV եռամսյակ 1250,0 հազ. դրամ, ընդամենը՝ 1250,0 հազ. դրամ:

7.Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրի նախահաշվի (բաժին 9 խումբ 5 դաս 1)

. հոդված «5112 – Շենքերի և շինությունների շինարարություն» ծախսային հոդվածը պակասեցնել 40.0 հազ.դրամ, սահմանել 7960,0 հազ. դրամ՝ I եռամսյակից.ընդամենը 7960,0հազ,դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 64-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օերնքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը, Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 110-Ն որոշմամբ հաստատված Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | |
| Վարսիկ Ասրյան | | |
| Անուշ Բաղդասարյան | | |
| Արմեն Գրիգորյան Փ. | | |
| Ատոմ Գագինյան | | |
| Արմեն Դավթյան | | |
| Ջոն Կիրակոսյան | | |
| Հմայակ Մարտիրոսյան | | |
| Մարտուն Մարտիրոսյան | | |

Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 65-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԵՎ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՊԱՏՎՈ ՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և Ստեփանավան համայնքի ավագանու 2026 թվականի մարտի 20-ի N 20-Ա որոշմամբ, Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի առաջարկը՝ Ստեփանավան համայնքի քաղաքաշինությանը և բարգավաճմանը նպաստելուն ուղղված բացառիկ մեծ վաստակի և Ստեփանավանի տնտեսական, մշակութային զարգացման գործում ակնառու ներդրում ունենալու համար Էմիլ Ռաֆիկի Երիցյանին և Սուրեն Ռաֆիկի Պապիկյանին **«Ստեփանավանի պատվավոր քաղաքացի»** կոչում շնորհելու և **«Ստեփանավանի երախտագիտություն» Պատվո Նշանով պարգևատրելու մասին:**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | |
| Վարսիկ Ասրյան | | |
| Անուշ Բաղդասարյան | | |

Արմեն  Գրիգորյան Փ.
Ատոմ Գագինյան
Արմեն Դավթյան
Ջոն Կիրակոսյան
Համայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«06954104» «ՈՍԿԵՀԱՏ»

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 66-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով, Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 24 հունիսի 2026 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին» N 57-Ա որոշման 1-ին կետը փոխել և շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

   Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 18.09.2026 թվականին, ժամը $14^{30}$-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | |

Վարսիկ Ասրյան
Անուշ  Բաղդասարյան
Արմեն  Գրիգորյան Փ.
Ատոմ Գագինյան
Արմեն Դավթյան
Ջոն Կիրակոսյան
Հմայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«26» օգոստոսի 2026 թվականի N 67-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի զարգացման, քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտություն է առաջացել սահմանված կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, 11 հունիսի 2026 թվականի թիվ 11062026-06-0101, 24 հուլիսի 2026 թվականի թիվ 24072026-06-0094, 03 օգոստոսի 2026թվականի թիվ 03082026-06-0016, 6 օգոստոսի 2026 թվականի թիվ 06082026-06-0035 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել Ստեփանավան համայնքի ղեկավարին համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, աճուրդով վաճառքի սահմանված կարգով օտարել Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող հետևյալ հողամասերը՝
   - Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան, Դեսինի փողոց 32/2 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0109-0091 կադաստրային ծածկագրով, 0.00316 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության

հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ:

- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան, Արևելյան փողոց 15/2 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0338-0028 կադաստրային ծածկագրով, 0.04404 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 3150000 /երեք միլիոն մեկ հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան, Ամերիկյան թաղամաս 4 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0101-0017 կադաստրային ծածկագրով, 0.01 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 390000/երեք հարյութ իննսուն հազար / ՀՀ դրամ:
- Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան, Գերմանական Կարմիր խաչի թաղամաս 12 հողամաս հասցեում գտնվող, 06-007-0343-0007 կադաստրային ծածկագրով, 0.04 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 3000000/երեք միլիոն/ ՀՀ դրամ:

Համայնքի ավագանիներ.

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | | |
| Վարսիկ Ասրյան | | | |
| Անուշ Բաղդասարյան | | | |
| Արմեն Գրիգորյան Փ. | | | |
| Ատոմ Գագինյան | | | |
| Արմեն Դավթյան | | | |
| Ջոն Կիրակոսյան | | | |
| Համայակ Մարտիրոսյան | | | |
| Մարտուն Մարտիրոսյան | | | |
| Սյուզաննա Նազարյան | | | |
| Աղունիկ Նալբանդյան | | | |
| Լևոն Պապյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 68-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 111/31 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-007-0006-0036 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.002 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գերասիմ Սերյոժայի Հովասափյանի կողմից 26.06.2026 թվականին ներկայացված թիվ 1820 դիմումը, 03.11.2025 թվականի N 03112025-06-0040 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը և Ստեփանավան համայնքի ավագանու 24.06.2026 թվականի թիվ 56-Ա որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման $14^1$-րդ կետով և 46.2-րդ կետի ա ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել Ստեփանավան համայնքի ղեկավարին՝ Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող, Մարշալ Բաղրամյան փողոց 111/31 հասցեում գտնվող 0.002 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ ք. Ստեփանավան Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 111 հասցեում գտնվող շենքի առաջին հարկում գործող սննդի կետին կից հասարակական օբյեկտ կառուցելու նպատակով՝ 15 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով Գերասիմ Սերյոժայի Հովասափյանին տրամադրելուն:

2. Կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասի վարձավճարի չափը սահմանել 1 քմ-ի համար տարեկան 2900 (երկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ըստ որի 20 քմ հողամասի տարեկան վարձավճարը կազմում է 58.000 (հիսունութ հազար) ՀՀ դրամ:
3. Ստեփանավանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնին հանձնարարել՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Գերասիմ Սերյոժայի Հովասափյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:
4. Պարտավորեցնել Գերասիմ Սերյոժայի Հովասափյանին պայմանագրից ծագող իրավունքները երկամսյա ժամկետում գրանցել ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ Դեմ Ձեռնպահ

Արմեն Գրիգորյան
Վարսիկ Ասրյան
Անուշ Բաղդասարյան
Արմեն Գրիգորյան Փ.
Ատոմ Գագինյան
Արմեն Դավթյան
Ջոն Կիրակոսյան
Հմայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 69-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 06-007-0007-0076 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման 8-րդ գլխով և հիմք ընդունելով 20.11.2025 թվականի N 20112025-06-0063 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող, 06-007-0007-0076 կադաստրային ծածկագրով, 0.00817 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշնակության հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելուն: Տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 236930 /երկու հարյուր երեսունվեց հազար ինը հարյուր երեսուն/ ՀՀ դրամ: Կառուցապատման իրավունքի ժամկետ սահմանել 15 տարի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- |
| Արմեն Գրիգորյան | | |

Վարսիկ Ասրյան
Անուշ  Բաղդասարյան
Արմեն  Գրիգորյան Փ.
Ատոմ Գագինյան
Արմեն Դավթյան
Ջոն Կիրակոսյան
Հմայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» օգոստոսի 2026 թվականի N 70-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման 8-րդ գլխով և հիմք ընդունելով 12.09.2025 թվականի N 12092025-06-0090 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող, 06-007-0178-0023 կադաստրային ծածկագրով, 9.99365 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասը 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրելուն: Մեկնարկային գին սահմանել 49969 /քառասունինը հազար ինը հարյուր վաթսունինը/ ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | |
| Վարսիկ Ասրյան | | |

Անուշ  Բաղդասարյան
Արմեն  Գրիգորյան Փ.
Ատոմ Գագինյան
Արմեն Դավթյան
Ջոն Կիրակոսյան
Համայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան
Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ